

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ
2020**

**Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու համար
աղբահավաք մեքենայի և աղբամանների տրամադրման դրամաշնորհային ծրագրի
պայմանագրի ստորագրման արարողություն**

2021թ. հունվարի 26-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ «Մարդկային անվտանգության ապահովման ծրագրերի համար դրամաշնորհային աջակցություն» ծրագրի շրջանակներում 76, 960 ԱՄՆ դոլարի չափով Իջևան քաղաքում թափոնների կառավարման կարողությունները բարձրացնելու համար աղբահավաք մեքենայի և աղբամանների տրամադրման ծրագրի համար դրամաշնորհի պայմանագրի ստորագրման արարողությունը: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանի կողմից:

Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ Իջևան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Հայկ Ղալումյանի ներկայությամբ:

Ծրագրի նպատակն է կենցաղային թափոնների պատշաճ կառավարման համար Իջևան քաղաքին տրամադրել 240 աղբամաններ և աղբահավաք մեքենա: Դրանց օգնությամբ ակնկալվում է բարելավել թափոնների կառավարումն այս քաղաքում, որտեղ բնակվում է 19 հազար քաղաքացի: Ծրագիրը ներառում է նաև Իջևան քաղաքում հանրային իրազեկման արշավի իրականացում, որի նպատակն է հանրության շրջանում բարձրացնել բնապահպանական խնդիրների մասին իրազեկությունը:

Որպես ծրագրի արդյունք, ակնկալվում է նաև, որ թափոնների պատշաճ հեռացումն կբարելավի Աղստև գետի ջրի որակը՝ այդպիսով նպաստելով Հայաստանի բնապահպանական անվտանգության ապահովմանը, որը համահունչ է ՀՀ կառավարության առաջնահերթություններին և Ճապոնիայի կողմից Հանաստանի Հանրապետության աջակցության քաղաքականությանը:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը, իր ելույթի խոսքում նշեց, որ համայնքների դիմակայունության բարձրացմանը և զարգացմանն ուղղված նմանատիպ ծրագրերը մեծապես փոխում են մարդկանց կյանքի որակը՝ էապես փոխելով նրանց մտածելակերպը: Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իր ծրագրերն իրականացնելիս նպատակ է դնում մտածողություն և վարքագիծ փոխել՝ արմատավորելով մարդասիրական արժեքները, և այս մեկն էլ այդ

առումով բացառություն չէ: Միխիթար Մնացականյանը նաև հավելեց, որ Ճապոնիայի կառավարության հետ հաջող համագործակցության փորձ ունեն և վստահ է այս ծրագրի արդյունավետության մեջ:

Իր հերթին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջուն Յամադան ընդգծեց, որ ենթակառուցվածքի բարելավումը, թափոնների պատշաճ կառավարման փորձն և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը կնպաստեն Հայաստանի կայուն զարգացման նպատակների իրագործմանն: Դեսպան Յամադան նաև շեշտեց, որ այս օժանդակությունը կդառնա ոչ միայն քայլ ուղղված Հայաստանի շրջակա միջավայրի անվտանգության բարելավմանը, այլև կդառնա ամուր կապ և բարեկամության մարմնացում, ինչպես նաև փոխադարձ համակրանք, որը ավանդաբար ձևավորում է Ճապոնիայի և Հայաստանի հարաբերությունների հիմքը:



Դեսպան Յամադան և ՀԿԽԸ նախագահ Միխիթար Մնացականյանը ստորագրում են դրամաշնորհի պայմանագիրը



Դեսպան Յամադան և պարոն Մնացականյանի ձեռքսեղմումը պայմանագիրը ստորագրելուց հետո



Դեսպան Յամադանի ելույթը



Պարոն Մնացականյանի ելույթը